ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնք
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7, /0232/3-10-26 ashtarakmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 3309-Ա

<<ԹԵՎԱՆՅԱՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <ա> ենթակետի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀԱՄԱՇՏ-ԷԱՃԱՊՁԲ-23/15 ծածկագրով ՀՀ Արագածոտնիմարզի Աշտարակի համայնքապետարանի կարիքների համար աղբարկղերի ձեռքբերման ԷԱՃ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքած՝ <<ԹԵՎԱՆՅԱՆ>> ՍՊԸ-ն խախտել է ՀՀԱՄԱՇՏ-ԷԱՃԱՊՁԲ-23/15 ծածկագրով պայմանագրի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը. սահանահմանված կարգով և ժամկետներում չի իրականացրել պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Դիմել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ <<ԹԵՎԱՆՅԱՆ>> սահմանափակ պատասխանատվութամբ ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար /կցվում են տվյալները/:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով սահմանված ժամկետում և կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

20.09.2023թ.
ք.Աշտարակ